Դաւալու, վերջինը՝ Ալի Ղըզըլ, իսկ վաշտերը յատկացուեցին երկաթուղու պաշտպանութեան։

Գնդ. Զալինեանին յանձնարարուեց՝ ընդունելով 2րդ սահմանապահ գնդի Բանաքեռում թողած գոյքը, ձիերն ու ռուս սպաների մի մասին՝ կազմակերպել մի ձիաւոր գունդ։ Այդ ռուս սպաների մէջ էր և գնդ. Կորոլկովը որը նշանակուեց պարտիզանական գնդի ձիաւոր դիվիզիոնի հրամանատար և կարգադրութիւն ստացաւ կազմելու 3րդ հարիւրեակը սպայ Փիրումեանի հրամանատարութեան տակ։ Մի ուրիշ սպայ՝ փոխ-գնդ. Պերեկրեստովը նշանակուեց հրամանատար պարտիզանական հետեւակ գնդի, որի մէջ պաշտօն ստացան և իրենց քաջութեամբ թիւրքական ճակատում աչքի ընկած ուրիշ 10 ռուս սպաներ։ 1918թ. յունուարի կէսին գունդն արդէն պատրաստ էր՝ 3 գումարտակներով։

Մինչ այսպէս, Ազգ. Խորհուրդն ու զինուորական իշխանութիւնները կազմակերպում ու կարգաւորում էին իշխանութիւնն ու հայկական զօրամասերը, կացութիւնը հետզհետէ սկսում էր բարդանալ ու խճճուել։ Մի կողմից՝ բոլշեւիկների գործունէութիւն, միւս կողմից՝ ռազմաճակատի մերկացում, երրորդ կողմից՝ կովկասեան մահմեդականների հակապետական շարժումներ։ Եւ, վերջապէս, թիւրք գործակալներ, որոնք վխտում էին ամէն կողմ և ոտքի հանում Կովկասի մահմեդականներին՝ ռուսների և հայերի դէմ՝ նպատակ ունենալով փակել ռազմաղիտական ճանապարհները, կտրել հաղորդակցութեան բոլոր միջոցները և այդպիսով դիւրացնել թիւրք բանակի յաղթանակը։ Արդէն 1918թ. յունուարից սկսած Երեւանեան նահանգը դրեթէ ամբողջապէս թատերաբեմ էր մահմեդական խռովութիւնների։ Զուգընթացաբար թրքական շարժումներ էին տեղի ունենում և Կարսի, Թիֆլիսի ու Գանձակի նահանգներում՝ բոլոր այն վայրերում, որոնք որև է կապ ունէին ճակատի պաշտպանութեան հետ։

Պարզելու համար ա՛յն օրերի դժոխային կացութիւնը՝ առաջ բերենք մի քանի նմոյշներ բազմաթիւ նիւթերից։ Այսպէս, յունւ. 14-ին Իգդիրից հեռագրում են, որ քրդերը յարձակուել են ռազմաճակատ գնացող պետական պարենատար խմբի վրա՝ Կարա—Օրգով ճանապարհին, տարել են մեծ քանակութեամբ հացի պաշար՝ բարձած ուղտերով։ Սպանուած են շատ զինուորներ։ Բայազէտ—Մուսուն—Էջմիածին ճանապարհները փակուել են. ամէն օր տեղի էին ունենում յարձակումներ, սպանութիւն ու կողոպուտ։ Ալի-Ղըզըլ գիւղը տեղափոխուում է Ղամարլու՝ ազատուելու համար պաշարող թրքական ու քրդական հրոսախմբերից։

Յունւ. 20-ին Զուլֆայից հեռագրում են Անդրկ. Կոմիսարիատին. «Դրութիւնը Զուլֆայում սպառնական է. աւերի ու արիւնի են ենթակայ ամենքը. երկաթուղային ծառայողները խնդրում են փրկել իրենց ընտանիքների կեանքը։ Ամէն օր հրացանաձգութիւն է տեղի ունենում. կան սպանուածներ ու վիրաւորներ։ Ազգային թշնամութիւնը սուր բնոյթ է ստացել։ Ամենքը ենթակայ են վտանգի։ Ռուս զինուոր համարեա չկայ. բոլորը գնացել են։ Շուտափոյթ կարգադրութիւն պէտք է անել փոստը Ալեքսանդրապոլ կամ Թիֆլիս փոխադրելու համար, հակառակ դէպքում բոլոր ծառայողները կը փախչեն»։